


Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«15»_դեկտեմբերի_2021 թ. թիվ 163 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2021 թ.

Հաշվետու տարում ասպիրանտուրայի բաժինը կազմակերպել և իրականացրել է 2021-2022 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը:

Առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության համար հատկացվել էր 33 տեղ: Դիմել էին 25-ը՝ 15-ը բնագիտական, 10-ը՝ հումանիտար հասարակագիտական բնագավառի մասնագիտությամբ, 12 –ը արական 13-ը՝ իգական սեռի դիմորդ:
Թափուր էր մնացել 8 տեղ:

Մրցութային էին՝

- | | |
|-----------------------------------|-----|
| 1. Ա.02.01 Տեսական մեխանիկա | 1:2 |
| 2. ԻԴ.04.01 Երկրաբնապահպանություն | 1:2 |
| 3. Է.00.02 Համաշխարհ. պատմություն | 1:2 |
| 4. Ը.00.02 Տնտես. և կառավարում | 1:2 |

Մասնագիտական քննությունից հետո թափուր մնաց 17 տեղ:

Մրցութային էր 3 տեղ, հետևյալ մասնագիտություններով.

1. Ա.02.01 Տեսական մեխանիկա – 1 տեղ 2 դիմորդ
2. ԻԴ.04.01 Երկրաբնապահպանություն – 1 տեղ 2 դիմորդ
3. Ը.00.02 Տնտես., նրա ոլորտների տնտ. և կառավարում – 1 տեղ 2 դիմորդ

Բարձր գնահարական ստացած այդ 3 դիմորդների համար վերաբաշխման նամակ է ներկայացվել ԿԳՄՍ նախարարություն:

Նախարարությունը հատկացրել է 2 տեղ հետևյալ մասնագիտություններով.

1. Ա.02.01 Տեսական մեխանիկա – 1 տեղ
2. ԻԴ.04.01 Երկրաբնապահպանություն – 1 տեղ

Արդյունքում առկա ուսուցմամբ ընդունվել է 17 դիմորդ:

11-ը բնագիտական, 6-ը հումանիտար հասարակագիտական բնագավառի մասնագիտությամբ, 9-ը արական, 8-ը իգական սեռի դիմորդ:

Վճարովի հիմունքով դիմել և ընդունվել է 1 դիմորդ:

Առկա ուսուցմամբ 2021թ. ասպիրանտուրա է ընդունվել 17 անվճար և 1 վճարովի հիմունքներով ասպիրանտ:

Հեռակա ուսուցմամբ հատկացվել է 5 տեղ, դիմել և ընդունվել է 1 անվճար հիմունքով ասպիրանտ:

Տարեսկզբին ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 98 ասպիրանտ, որից 55-ը՝ առկա, իսկ 43-ը՝ հեռակա, վճարովի հիմունքներով՝ 15-ը, որից 2-ը՝ արտերկրացի ասպիրանտ: Հայցորդների թիվը 168 էր, որից 78-ը՝ վճարովի հիմունքով, 90-ն անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 20 ասպիրանտ (10-ն առկա, 10-ը հեռակա, որից 2-ը վճարովի հիմունքներով՝ 1-ն արտերկրացի ասպիրանտ):

Առ 01.01.2022 թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 101 է (60-ն առկա, 41-ը՝ հեռակա), վճարովի հիմունքներով սովորում է 12 ասպիրանտ (1-ն արտերկրացի): Հայցորդների թիվը 156 է (86-ը վճարովի, 70-ն անվճար հիմունքներով՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Ասպիրանտների բաշխումը ըստ բաժանմունքների

| ԳԱԱ բաժանմունքները և գիտական կազմարերպությունները | 2021 թ. ընդունվել են ասպիրանտուրա | | | Ասպիրանտների թվաքանակն առ 01.01.2022 թ. | | |
|--|-----------------------------------|------|-------|---|------|-------|
| | առկա | հեռ. | վճար. | առկա | հեռ. | վճար. |
| <i>Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք</i> | 3 | 0 | 0 | 11 | 3 | 1 |
| <i>Ճիզգիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք</i> | 1 | 0 | 0 | 10 | 5 | 0 |
| <i>Բնական գիտությունների բաժանմունք</i> | 5 | 1 | 0 | 15 | 10 | 1 |
| <i>Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունք</i> | 2 | 0 | 0 | 6 | 0 | 0 |
| <i>Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք</i> | 6 | 0 | 1 | 17 | 23 | 8/1* |

| | | | | | | |
|---------------------------------------|-----------|----------|----------|-----------|-----------|--------------|
| <i>Գիտակրթական միջազգային կենտրոն</i> | 0 | 0 | 0 | 1 | 1 | 2 |
| <i>Ընդամենը՝</i> | <i>17</i> | <i>1</i> | <i>1</i> | <i>60</i> | <i>41</i> | <i>12/1*</i> |

* Արտերկրացի ասպիրանտ

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների կազմակերպվել է գարնանային և աշնանային դասընթացներ «Մասնագիտական օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաներից: Դասընթացները՝ «Մասնագիտական օտար լեզու» (անգլերեն, և «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» առարկաներից շարունակվում են առցանց ձևով: Դեկտեմբերին պահպանելով համաճարակից խուսափելու կանոնակարգի բոլոր պահանջները, բարեհաջող իրականացրեցվեցին պարտադիր դասընթացների աշնանային քննությունները:

Տարվա կտրվածքով ԳԱԱ ասպիրանտուրայում քննություններ են հանձնել՝ «Մասնագիտական օտար լեզու» առարկայից՝ 65, «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» առարկայից՝ 69, «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայից՝ մոտ 90 ասպիրանտ և հայցորդ:

2021թ. ԳԱԱ ասպիրանտուրայի շրջանավարտներից պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն 35-ը՝ 11-ն ասպիրանտներ, 22-ը հայցորդներ և 2 արտերկրացի ասպիրանտ::

Հաշվետու տարվա ընթացքում պատրաստվել և տրվել են տեղեկանքներ՝ որակավորման քննությունների վերաբերյալ ԲՈԿ ներկայացնելու և զինկոմիսարիատներին ներկայացնելու համար պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու համար:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն ներկայացնելու համար հավաքագրվել և ձևավորվել են ԳԱԱ գիտական կազմակերպություններից հաշվետու տարում ընդունված, ավարտած և սովորող ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի: